

ԷՐՏՈՂԱՆ ՓՈՓՈՒՍՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿԷ ԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան վերատեսու-
թեան ենթարկեց իր կառավարութիւնը: Անոր կազմած նոր դահ-
լիճը կ'ընդգրկէ ութ նոր դէմքեր, իսկ նախկին կազմէն՝ եօթը
նախարարներ ստանձնեցին տարբեր նախարարութիւններ:

Թրքական մամուլին համաձայն, ամենայնպէս չափազանց
փոփոխութիւնը կատարուած է արտաքին գործոց նախարար-
ութեան մէջ, ուր նախկին արտաքին գործոց նախարար Ալի
Պապաճան նշանակուեցաւ փոխվարչապետ եւ միաժամանակ՝
տնտեսութեան նախարար: Իսկ արտաքին գործոց նախարարու-
թեան պաշտօնը յանձնուեցաւ Փրոֆ. Ամետ Տավուտօղլուին:

Տավուտօղլու՝ նախապէս եղած է վարչապետ Էրտողանի
քաղաքական խորհրդակցանքը:

Թրքական մամուլէն քաղուած լուրերուն համաձայն, նախա-
գահ Ապտալա Կիլ ծրագրած է եռօրեայ այցելութիւն մը կա-
տարել Ղազախստան, Մալդիվա յարաջիկայ օրերուն: Թրքական
մամուլին կարծիքով, նախագահ Կիլի խօսակցութեան առանց-
քը պիտի կազմէ շրջանային փոխարարութիւնները եւ յատ-
կապէս՝ Սուրիա-Իսրայէլ խաղաղութեան բանակցութիւններուն
ընթացքը:

Թրքական օդուժը ռմբակոծեց Զիւսիսային Իրաքի մէջ գտնու-
ող Քիւրտիստանի Աշխատարական կուսակցութեան դիրքեր:
Յատկանշական է, որ նոյն պահուն Իրան ռմբակոծեց Քիւրտիս-
տանի ինքնավար շրջանի հետ իր սահմանագիծին մօտակայ
դիրքեր:

Անգարա գոլուշացուց Եւրոպական Միութիւնը՝ Կիպրոսի վե-
րամիացման բանակցութիւններուն ընթացքին յունական Կիպ-
րոսի իշխանութեան նպատակը քայլի մը հետեւանքներէն:

Թուրքիա ներկայիս կը մերժէ իր բռնագրաւած շրջաններէ
ներս գոյութիւն ունեցող կալուածները յանձնել իրենց յոյն սե-
փականատերերուն: Եւրոպական Միութիւնը՝ Թուրքիայէն կը
պահանջէ կալուածները անմիջապէս յանձնել իրենց իրաւ-
ական սեփականատերերուն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՑ ԼՈՒՐԵՐ

Աշխարհի գրեթէ բոլոր ափերուն Ուրբաթ օր նշուեցաւ Աշխա-
տարներու Օրը: Իսթանպուլի, Պերլինի, Փարիզի, ինչպէս նաեւ
այլ ուսանցներու մէջ Մայիս 1-ի առիթով կազմակերպուած ցոյցերը
յատկանշուեցան ոստիկանութեան եւ ցուցարարներու միջեւ բա-
խումներով, որուն հետեւանքով եղան ձեռքարկութիւններ, վիրա-
ւորներ եւ հիւանդանոց փոխադրուողներ:

**

Սպիտակ Տան պետական քարտուղարութեան խօսնակ Ռո-
պերթ Վուտ՝ Մուսանի մէջ գործող բոլոր քաղաքական հոսանքնե-
րէն պահանջեց դադարեցնել վայրագութիւնը եւ գործադրել՝ Տար-
ֆուրի խաղաղութեան համաձայնագիրին կէտերը:

Վուտ քսաւ, թէ Ռաշիդկըրմ պատրաստ է օգնութեան ձեռք մեկ-
նելու խաղաղութեան յանձնառու բոլոր կողմերուն:

Միւս կողմէ, ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը, տարիով մը
վերանորոգեց Մուսանի մէջ իր մարդասիրական առաքելութիւնը:

**

Միացեալ Նահանգներու Գոնկրէք վարերացուց 2009-2010
տարուան պետական պիտոճէն: Պետական պիտոճէն կը գնա-
հատուի 3400 միլիար տոլար:

**

Իրաքի մէջ գործող ամերիկեան բանակի հրամանատարութիւնը
հաղորդեց երեք ամերիկացի զինուորներու սպանութիւնը Անգարի
մէջ:

Նշենք, թէ 2003-ի Մարտէն ի վեր, Իրաքի մէջ սպանուած ամե-
րիկացի զինուորներուն թիւը բարձրացաւ 4281-ի:

**

Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան ներ-
կայացուցիչ Ռիչիլըմ Պրընզ պաշտօնապէս հերքեց Մեուտական
Արաբիոյ Ապտալա Պրն Ապտէ Ազիզ թագաւորին եւ Իսրայէլի
նախագահ Շիմոն Փերեզի միջեւ հանդիպումի մը իրողութիւնը:

Պրընզ ըսաւ, թէ այդպիսի լուր մը, իր խորքով ու բովանդակու-
թեամբ իրականութեան չէր համապատասխաներ:

**ԴԺՈՒԱՐ ՕՐԵՐՈՒ
ԲԱՐԵԿԱՄԴ**

ԱՖՀԻԼ AFHIL

www.afhil.com 01 - 242556 / 7

Հայրենական Մամուլ

«ՈՉ ԲՈԼՈՐԸ ԿԸ ՑԱՆԿԱՆ, ՈՐ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀՆՉԷ»

Կը դժգոհի Մարտ 1-ի յանձնաժողովի նախագահ
Սամուէլ Նիկոյեանը

- Դեռ մէկ ամիս առաջ ըսած էիք, որ կը պատրաստուիք յանձ-
նաժողով հրաւիրել նախկին ոստիկանապետ Հայկ Յարութիւ-
նեանին: Կատարած էք ձեր մտադրութիւնը:

- Եղած է աշխատանքային խորհրդակցութիւն պարոն Յա-
րութիւնեանի հետ, այն հարցերը, որոնք կու տանք փոխօստի-
կանապետներուն, տուած են նաեւ անոր, եւ ստացած են պա-
տասխանները եւ տեղեկացուցած են յանձնաժողովին: Բայց
յանձնաժողովի մօտ էի հարցեր կան եւ եղաւ առաջարկ, որ
ամէն մէկ դէպքի մէջ Հ. Յարութիւնեան պետք է հրաւիրուի
յանձնաժողով: Յանձնաժողովի եզրակացութեան մէջ անդրա-
դարձ պետք է ըլլայ մեր առջեւ դրուած երեք կէտերէն երկուքը՝
բռնութիւններուն եւ ոստիկանութեան գործողութիւններու իրա-
ւաջափութեանը: Վերջին 3-4 ամիսներուն յանձնաժողովը կը
փորձէր խորանալ «Չերոյմուխա-7»-ի հարցին մէջ, որ գոնէ
ճշդէր «Չերոյմուխա-7»-ին գոհուած երեք քաղաքացիներու մահ-
ան հանգամանքները: Ցաւօք՝ ապարդիւն: Մենք կ'ուսումնա-
սիրենք նաեւ հրագրէն գոհուածներու մասով բոլոր փորձագի-
տական եզրակացութիւնները եւ չենք կրնար այդ կապակցու-
թեամբ եւս որեւէ եզրակացութիւն ընել, որովհետեւ փորձաքնու-
թիւններու արդիւնքներու մէջ, մասնաւորապէս, երբ պահպան-
ւած է գնդակը, որեւէ ոստիկանի կրած գնդի հետ այդ գնդակը
չի համապատասխաներ: Սկսանք հանդիպիլ գոհուածներու
ծնողներու, վկաներու հետ, որպէսզ փորձենք անոնց միջոցով
նոր փաստեր ձեռք բերել: Ես ապարդիւն եմ: Մտահոգիչ է, որ
թէեւ իրադարձութիւնները տեղի ունեցած են հազարաւոր մար-
դոց ներկայութեամբ, սակայն ոեւէ մէկը չի ցանկանար տեղե-
կութիւն հաղորդել, թէկուզ զարդուի: Եւ այս գրեթէ անհնարին
կը դարձնէ այս պահին մահուան հանգամանքներու բացայայտ-
ման խնդիրը:

- Փաստահաւաք խումբը ստեղծուեցաւ ձեր յանձնաժողովի
աջակցելու համար, սակայն տեւական ժամանակ է՝ այդ խմբին
ծայն չկայ: Խումբի որոշ անդամներ կը շրջին թիկնապահներով:
Դուք տեղեկ էք այդ ինչ բացայայտումներ կ'ընեն, որ կը վախ-
նան իրենց անձի համար: Այս ընթացքին ի՞նչ կարելու ինֆոր-
մացիա ստացած էք խումբէն, ի՞նչ կարգի շփումներու մէջ էք:

- Ես փաստահաւաք խումբի հետ կը խօսիմ մամուլի միջո-
ցով, որովհետեւ իրենց կողմէն յարաբերութեան մէջ մտնելու
որեւէ ցանկութիւն չտեսայ: Եթէ իմ կողմէն նախաձեռնութիւնը
շատ կ'ըլլայ՝ կրնայ ուրիշ կերպ ընկալել անոնց կամ անոնց
նշանակողներու կողմէն: Այդ պատճառով, բաց ըլլալով, նա-
խաձեռնութիւնը թողած են իրենց: Բազմիցս կրկնած են, որ բո-
լոր միւս հարցերու հետ կապուած յանձնաժողովը ունի բաւա-
րար նիւթեր, բաց կը մնայ գոհերու մահուան հանգամանքնե-
րու ուսումնասիրութիւնը: Հրաւիրած են մեր նիստերուն, չեն
եկած, աւելին, իրենք կրնան ուզած հարցը տալ, մենք ուղղեց
յանձնաժողովը եկած փոխօստիկանապետներուն կամ ուրիշնե-
րուն, չէ եղած նման բան: Յանձնաժողովի գործունեութեան
ժամկետը երկարացուցին՝ սպասելով խումբի ինֆորմացիային,
բայց իմ մէջ փոքր-ինչ մտահոգութիւն կայ:

- Դուք ինչո՞վ կը բացատրէք, որ փաստահաւաք խումբը
հակուած չէ համագործակցութեան եւ ինչո՞ւ մտահոգ էք:

- Վերջնական եզրակացութեան մէջ ես կ'ընեմ այն միտքերը,
որ այս ամիսներուն կուտակուած են, ըսելու, որ ոչ բոլորը կը
ցանկանային, որ ճշմարտութիւնները հնչեն: Եթէ յանձնաժո-
ղովին մասնակից ըլլային ընդդիմութեան բոլոր ներկայացու-
ցիչները, ապա իրօք վերջակէտ դրուելու ցանկութիւնն է, որ կը
բացկայի:

- Կ'ուզեք ըսել, որ փաստահաւաք խումբը չ'ուզէր վերջա-
կէտ դնել:

- Աստուած տայ, որ փաստահաւաք խումբը կրնայ վերջա-
կէտ դնել, եւ այդ կ'ուզեմ, բայց այս աշխատանքը եւ ամէն ին-
չը, այս երկար ժամանակը... Աստուած տայ՝ եւ կը սխալիմ,
բայց այս ամէնը մտահոգութիւններ կ'առաջացնէ:

(«ԱՍՈՒՍ»)

**ՃԱՇԱՐԱՆ
ՆԱՀՐ ԷԼ ՓԱՆՆԱ**

(Տնօրէնութեամբ Յովհաննէս Փայասլեանի,
նախկին սեփականատեր ճաշարան ԱՂԱ-ի)

* Ըբել կաշառուում
* Մասնագիտացած անձնակազմ
* Համաբար եւ ճոխ արեւելեան ճաշացուցակ
* Ուսումնասիրուած սակագոյց
* Մրահը կը ներկայէ 350 անձ

Կը ստանձնենք միութենական, ընտանեկան եւ
հարսանեկան խրախճանքներ, յատուկ սակացոյցով:
Հասցէ. Նահր Էլ Բելայի մուտքէն 2 քիլոմէթր ներս,
հեռ. 04-930200 եւ 03-261275

ԳՐՎՈՒԿԾ ՕՐ

**15 Մայիս 2009,
երեկոյեան ժամը 8:00-ին**

ՀԱՅ ԱՐԵՏ. ԳՈՒԼԷԾԻ
«ԾԻՐԱՆԻ»
ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ
ՀԱՄԵՐԳ

ԳՐՎՈՒԿԾ ՕՐ

**Հ.Մ.Մ.
ԱՆԹԻԼԻԱՍ**

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ
22 Մայիս 2009,
ՄՏԵՐՄԻԿ ԵՐԵԿՈՅ
23 Մայիս 2009,

ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՉ

3 ՄԱՅԻՍ
* 1469՝ ճնալ իշխան, քաղաքագետ Նիքոլո Մաքիավելլին:
* 1494՝ Գոլոմպոս կը յայտնաբերէ ճամայիքան:
* 1715՝ Էտմընտ Հալի կը բացայայտէ ամբողջական խաւա-
րումի գործընթացը:
* 1979՝ Մարկալթե Թեյլըր կը դառնայ Բրիտանիոյ առաջին
կին վարչապետը:

**Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ս.Գ.Հ.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեզ
տեղեկացնել, թէ յետ այսու իր Նոր Հաճնոյ եւ Անթիլիասի գրա-
սենականները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեր ընտրա-
կան կարգավիճակը:

- Նոր Հաճնոյ գրասենեակ (01-444738) բաց է շաբթուան
բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն
5:00:

- Անթիլիասի գրասենեակ (04-522345) բաց է շաբթուան
բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի
օրերէն:

**Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

Ազգ. Ռուբինեան-Սահակ Մետրոպէան Վարժարան

ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
Հոգաբարձութեան

Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝
ԿԱՐՕ ԿԱՊՈՒՏԱԿԵԱՆԻ

Նուագի ընկերակցութեամբ հանրաձանօթ արուեստագետ
Խաչիկ Մալխասեանի

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մայիս 2009, կէսօրուան ժամը
1:00-էն սկսեալ, «Նահր Ալ Փաննա» ճաշարանին մէջ, Նահր Էլ
Բելայ:

Haigazian University

Accepting Applications Now

Fall 2009 - 2010

* Faculty of Business Administration & Economics (B.A./B.B.A./M.B.A.)
* Faculty of Sciences (B.S.)
* Faculty of Social & Behavior Sciences (B.A./M.A.)
* Faculty of Humanities (B.A.)
Kantari, Beirut, admissions office:
01-349230/1, 01-353010/1/2
admissions@haigazian.edu.lb
www.haigazian.edu.lb

Կ'ՈՒԶՈՒԻ

Kodak Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսա-
նած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հետեւանալ
03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին:
kanekour@dm.net.lb

**ՄԻՕՐԵԱՅ
ԶԲՕՍԱՊՏՈՅՏ**

Դ.Է.ՊԻ

«ՄԱՐ ԶԱՐՊԷԼ»

Կազմակերպութեամբ՝
Sidon RAZMIG-ի

§ ԱՅՏԵՆՈՒԹԻՒՆ «ՄԱՐ ԶԱՐՊԷԼ» Ի ՈՒՍՏԱԿԱՐՅՐ
§ ՃԱՇԱՐԱՆ «ԱՆՆԱՅՆ»
§ ԱՆԿԱՆՈՒՄՆԵՐ

Կիրակի, 3 Մայիս 2009-ին

Հասց. Առաւելեան ժամը 8:30-ին, Նահրի «Bank of Beirut» առջեւ
Հանրապետական համար հեռաձայնը՝ 03 242531 թիւին

ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

جريدة يومية سياسية ارمنية
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)
المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان